տոմսերով 1886 թ. սեպտեմբեր. 3-ից № 106, 668, 1887 թ. մարտի 3-ից և 4-ից №№ 106, 676, և 106, 677, տասը տարուան պայմանաժամն անցնելուց յետոյ, ինչպէս որ յիշուած է այդ տոմսերում, իրաւունք ունի ձեռք բերելու այլ տոկոսաբեր թղթեր, որ ապահովուած են կառավարութեան կողմից (եթէ հարկաւոր է, նոյն իսկ անուանական, իմ անունով), և միշտ տոկոս են բերում, որոնցով կարող լինին անընդհատ ոչ պակաս քան երեք թոշակաւոր ուսանել Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանում ամենաչքաւոր Հայերի զաւակներից և գրքեր տպագրուել Հայերէն լեզուով, համաձայն սոյն կտակի Գ. և Դ. կէտերին»։

Է. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան երկու դրամատոմս (օբլիգացիա), իւրաքանչիւրը հազար բուբլիանոց, կտակում եմ որպէս պարգև այն անձին, որ կը կազմէ և կը տպագրէ Հայերէն լեզուով Հայկական բառերի արմատների մի բառգիրք»։

Ը. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան երկու դրամատոմս, իւրաքանչիւրը հազար բուբլիանոց, կտակում եմ որպէս պարգև այն անձին, որ կը կազմէ և կը տպագրէ Հայերէն լեզուով Հայկական հոմանիշ բառերի մի բառգիրք»։

Թ. Նէպ. — «Արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց սոյն կտակի եօթներորդ կէտում նշանակուած երկու տոմսերի և արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց ութներորդ կէտում նշանակուած երկու տոմսերի տոկոսները մինչի բառգրքերի տպագրութիւնը պիտի յաւելացուին այն գումարի տոկոսներին, որ կտակիս չորրորդ կէտի համաձայն նշանակել եմ Հայերէն լեզուով դասագրքեր տպագրելու համար։ Արևելեան երրորդ փոխառութեան հազար բուբլիանոց չորս դրամատոմսերը, որ նշանակուած են բառգրքեր կազմելու համար, իմ մահից յետոյ պիտի յանձնուին Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանին ըստ պատկանելոյն գործադրելու համար։ Այդ պարգևները տալը որոշելն յանձնում եմ Էջմիածնի Հայոց Հոգևոր ճեմարանին այն պայմանով, որ նա պարգևի համար առաջարկած երկասիրութեանց մասին հարցնէ Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի և Մոսկուայի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց Լիցէոնի Հայկաբանութեան պրոֆեսորների, այլ և այդ բանի համար անհրաժեշտ հմտութիւն ունեցող այլ անձանց կարծիքները, իսկ մրցանակ տալը վճռելուց յետոյ տպագրէ իւր արձանագրութիւնն այդ մասին բոլոր ստացուած կարծիքների հետ միասին»։ Բժ. Գ. Տիգրանեանի սոյն կտակը հաստատուած է 1894 թ. փետրուարի 17-ին Տագանրոգի նահանգական դատարանում և կտակատար նշանակուած է նոր Նախիջևանի Աղքատաց խնամատար Հոգաբարձութիւնը։

—

ԾԱՆՈՒՅՑՈՒՄՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻՑ։

1. Եկեղեցական — ծխական դպրոցների ուսուցիչներից ոմանք խնդրում են յետ դարձնել իւրեանց ուսման և այլ վկայագրերը։

Այս առթիւ Դիւանս ծանուցանում է, որ առ հասարակ բոլոր ուսուցչաց վկայագրերը շուտով կուղարկուին Սրբազան Առաջնորդներին իւրեանց տէրերին յանձնելու համար։

2. Դիւանս ծանուցանում է, որ եկեղեցական — ծխական ուսումնարանների վերաբերեալ ամենայն գրութիւն և առաջարկութիւն պէտք է մատուցուին յանուն Նորին Վեհափառութեան, միմիայն Սրբազան Առաջնորդների միջոցաւ։

—

Ուսուցչաց ընդհանուր ցուցակի մէջ մուծուած են հետևեալ անձինք.

1. Աբրահամ Ազատեան . . . . . Ե. կարգ
2. Իոաննան Տէր Յովհաննիսեան . Դ. »
3. Թագուհի Արարատեան . . . . Ժ. »
4. Նատալիա Նազարեան . . . . ԺԱ. »